



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

8349

Dark Abyssinian

Pug with green eyes

J. H. Steele 1893



542-3
-89

ՀԵՂՈՆ ԳՐԱԴԱՐԱՆԵՐԵՐԵ

ՏԻՓԼԻՍ

ТИФЛИСЪ.

Типо-Лит. А. О. Меликъ-Шах-
назаріянца.

1893

2003

“Илья” иллюстрации Ильи Чистякова
изданы
Симбирской губернаторской типографии

Симбирской губернаторской типографии:

0023

„ԶԱՐ ՀՐԵՇԱԿ“

ան (ԿԵԱՆՔԻ ԳԺԵՐ)

891.542-3

9-89

... Свѣтится, ровно огонекъ.
Подъѣхалъ ближе, смотрю: свѣчка
Восковая 5-ти копѣчная при-
клеена къ распоркѣ и говоритъ,
и вѣтромъ не задувается...

(Графъ Левъ Ник. Толстой).

1001
4899
9

ԳՐԵՑ

ԼԵԽՈՎ ԴՐԻԳԱՄՐԵԱՆ:

Տ Փ Խ Բ Ո
Տպարան և վիմագ. Ա. Յ. Մելիք-Շահնազարեանի:

1893



Дозволено Цензурою Тифлисъ, 15-го Июля 1893 г.

Ա.ՆՈՒՇԱ.ԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՍՊՐԴԱԾ Վ.ՐԻՊԱԿՆԵՐ.

- 2—երես— 5—տող դաձնիլ—դարձնիլ
- 4— 7 — հետ — —հետ:
- 4— 14— ճնշէ — որ ճնշէ
- 4— 18— մինչև և մինչև
- 4— 21— ինձասելով,—ինձ, ասելով.
- 5— 1 —կարծես—կարծէք:
- 5— 5 —գրանութեան— գրականութեան
- 5— 9 —շատ է — շատ են
- 6— 22—ժամամանակ—ժամանակս
- 7— 13—ի մարտասահման—իմ արտասահման
- 7— 17—իմ ուղեղութեանս պատճառով արտասահման—իմ արտասահման ուղեղութելուս պատճառով.
- 8— 2 ցանկին — ցանկալին
- 8— 5 երբէք, երբէք—երբէք, երբէք,
- 8— 15—կըշջնջամ — կըշջնջամ
- 16— 2 —ըերտծ — ըերած
- 16— 2 —մատասրտի — մատաղ սրտի
- 16— 8 —մէջ — — իրենց մէջ
- 16—10 —շնորհալի — շնորհալի...
- 32—22 —որ խալխին «խաբեմ, ջիբս լցնեմ»:
որ՝ «խալխին խաբեմ ջիբս լցնեմ»:
- 32—25 — ագեղ — — տգեղ:

ԱՐԵՎԱԴՅԱՆԻ ԱՄԵՐԻԿԱ ՅՈՒՆԱՆԱԿԱՆԱԿԱՆԱ

Արմաքար — յիշեար բառ — 5 — սազմ — 2
տաճար — ուժ — 3 — 3

Տիգր ու — յանձ — 11 — 4
արքին և աշխան — 81 — 1

Հովհաննես — ինչպահանդ — 12 — 1
այլ անդամ — ուժագործ — 1 — 6

Առաջ առաջանք — մասնակութանք — 8 — 6
առաջ ու առաջ — 2 առաջ ու 2 — 6

Արքանանք — ինչպահանդանք — 82 — 8

Հայութականք առաջանքանք ու 81 — 5
առաջ

Հայ առաջանք առաջանքանք ու 81 — 5
առաջ ու առաջանքանք առաջանքանք

Հայութականք առաջանք
այլամաս — մասնակութանք — 8 — 8

Արքանք առաջանք առաջանք օ — 8
առաջանք — մասնակութանք — 81 — 8

առաջանք — առաջանք օ — 8
առաջանք — առաջանք օ — 81

առաջանք — առաջանք օ — 81 — 81
առաջանք — առաջանք օ — 81 — 81

առաջանք առաջ առաջանք օ — 81 — 81
առաջանք առաջ առաջանք օ — 81 — 81

առաջանք առաջ առաջանք օ — 81 — 81

ՆԱԽԱԲԱՆ.

I.

Դու, որ անկեցիր այստեղ ազգութեան
վեհ գաղափարի գրօշակը փայլուն,
Որ հաստատ մնացիր քո վերմ կոչման
Մինչև գերեզման իջնելու պահուն,

Դու, որ քո անկեղծ ու ազնուափայլ
Սրբազն գործով յառաջ մղեցիր
Նորածիլ սրտեր, պատուելով մուայլ,
Լուսոյ յաղթանակն ՚ի լոյս ածեցիր,

Կարսղ ես արդեօք մարդկային սրտում
Չգտնել որրան, չգտնել կայան,
Ուր, հանգստազուարձ խնդութիւններում
Խնդայ վեհ հոգիդ, ցնծայ յաւիտեան.

II

Ես տեսնում եմ որ, յարգոյ բարեկամ,
Նախանձի դեղ քո սրտի խորքում
Արմատ է հանել. քո ողբ ու կական
Զեռ նարկած գործիս գլխին են թափում:

Սակայն ես երբէք երես չեմ դաձնիլ
Իմ ընտրած շուղից. թէպէտ նա վշտ
Ու տատասկուէ. ինձ սլարտէտանիլ
Եղբօրս ցաւերն, վշտերն արիւնոս...

Ինչքան որ կ'ուզես թափիր իմ գլխին
Քո ողբ, հառաջանք, անբաւ յիշոցներ,
Ես պիտ' ընթանամ... մինչ տեսնեմ Մասոին
Իւր ձեռքին բանած և, ուստաւոր զէնք եր...

III.

Մալիսեան գեղեցիկ գիշերներից մէկն էր.
Երկնակամարի ազատ եթերում, լուսնի շուր-
ջը հաւաքուած, փալում էին աստղերը, որոն-
ցից իւրաքանչիւրի հայեացքը կենդրոնացած
էր մարդկային չարանենդ սրտերի վրայ: Գո-
լովինսկի պլուսպէկտով անցու դարձ անողնե-
րի թիւը չափազանց էր: Ես և Սամուէլ Նո-
րիկէանը, որ արտասահմանից նոր էր վերա-
դարձել գիւղատնտեսական վկայագրով, նըս-
տեցինք նոյն տեղի աթոռներից մինի վրայ և
անցեալի ուշագրաւ լիշտութիւններից կա-
խարգուած, պարոնը առանձնայատուկ դրու-
թեամբ սկսեց պատմել արտասահմանեան հայ
ուսանողների գրութիւնը, նրանց դաւը վի-
ճակը, մեծագոյն մասի ազքատ, գիւղացի լի-
նելը, տոկունութեան եռանդնու աշխոլժը և
ապագայի փալուն ասպարէզը՝ յօդուտ ազ-
գային բարօրութեան, յառաջադիմութեան:
Նորա ամեն մի խօսքի արտասանութիւնից կա-

բելի էր եզրակացնել թէ ի՞նչ սէր է տածում
դէպի ազգը, դէպի հայրենիքը, եզրալըները,
որոնք այնտեղ, բազմատառապ Հայստանի
խորքերումն ընկած տանջվում, տառապում
են: Նա ինքն էլ էր տանջվում, որովհետեւ
շատ թէ քիչ ծանօթ էր ազգային պատմու-
թեան հետ նա արտասահման եղած ժամա-
նակ կցկոտը լուրեր էր ստանում և վշտա-
հար արտից խորին հառաջանք էր արձակում—
«Միթէ ինձ ասա, նորա համար էր քո արիւ-
նաներկ նահատակութիւն, քո ընտրեալների
զոհած դիմակներ, որ գոռոզանայ այժմ ըըո-
նութիւն: Նորա համար էր, որ Աւարալը
ընդունեց իւր ծոցքաջ քաջ վկաներ, ճնշէ
հային գերութեան բեռը, որ գժողքփոխութիւն
նորա պարզ օրէր: (Նահազիզ. Սմբ): Նա ծա-
նօթ էր հայդրականութեան, հրատարակու-
թիւնների հետ մինչև անդամ չէր զլանում
ազատ ժամերը նուիրելու նոցա աշխատակցու-
թեան: Յանկարծ թօղնելով խօսքը, գարձաւ
ինձասելով.—Դուք ճանաչում էք կառքում
նստած պարոնին:—«Ո՛չ ով է—ըմիշկը: «Հա,
ըմիշկ Մելիք Արմիկեանը, —իսկ ուր է գնում
այժմ, գիտէք, —Ոչ ասացի, ես:—Ճեսնում էք
ինչ փառաւորապէս բազմած է կառքում,

կարծես ողջ աշխարհքը երեն է պատկանում.
«Լայաղ» էլ չի անում որ բարեկի:—«Ե՞ն, պա-
րոն Սամուել, Ուուսիալի համալսարանաւար
տըներն այնքան էլ ազգային խնդիրներով չեն
պարապում. նոքա ոչ լրագրութեան, ոչ գրա-
նութեան գուրծերում չեն խառնվում, նրան-
ցը միայն այն է որ, ստանան ոռոճիկը և փա-
ռաւոր կեանք վալելն:—Զալարապէլը հօ չը-
պարապել է, բայց շատ է փքվում: Աղայ
Մատ թէոսեանի տուն է գնում, խեղճի կինը
հիւանդ է:—«ով. օրիորդ Սաթինիկը, գիմեցի
ես Սամուել նորիկեանին:—Այո, այո, օրիորդ
Սաթենիկ Պանդխառեանը՝ տիկին Մատթէոսե-
անը, ասաց պ. Սամուելն ու խոր հառաջեց:—
բայց ինչ է հիւանդութիւնը:—«Ասում են
լուսնոտութիւն է պատահել: Գիշերները վեր
է կենում անկողնից երեսը շուտ շուտ խա-
շակնքելով, բարձրանում է գրասեղանի կամ
պաշարանի գլուխը և այն տեղից, ձեռքն ըն-
կածը ձգում ամուսնու վերայ: Մատթէոսեանը
շատ է մտատանջութեան ենթարկուել, սկս-
եալ այն օրից, ինչ որ կնոջը պատահեց այդ
դէպքը, այնպէս փոխուել, գունատուել է որ,
տեսնողը հազիւ հազ կարողանում է ճանաչել
նրան: Մազերը սկսել են սպիտակել, քաղց-

բահայեաց դեմքի ժպիտները չքացել, անլաւ-
տայել են:

Պարոն Սամուել. պէտք է դրա առաջը
շուտափոյթ առնուլ, գա վատ հիւանդութիւն
է. ինքն իրեն կ'վեր կենալ, կ'զնալ զանազան
բարձրութեանց վրայ կ'կանգնէ, և մինչև ան-
գամ, վայր կընկնէ և յաւիտեան չի վեր
կենալ:— Է, թողէք 'ի սէր Աստուծոյ, Հայե-
րիս այդ սնոտի ապաշտութիւնը: Ինչ է նշա-
նակում այդ, գեռ մի լսեցէք, լետոյ ինչ կու-
գէք արէք, ոչոք ձեր ձեռքը չէ բռնում այդ
բոլորը մեր պառաւներից հնարուած բաներ են,
ուրիշ ոչինչ: Ուսում ես ստացել, բայց դու
դարձեալ պառաւանման, այդպիսի ասացու-
ածների հաւատ ես ընծալում:

— Այն, ճիշտ է ձեր ասածը, բայց կան
դիպուածներ, որոնք տեղի են տալիս հաւատ
ընծայելու:— Ուրեմն դուք թերահաւատ էք,
և հաւատում էք և չէք հաւատում:— Լաւ,
լաւ, խնդրեմ վերջ տաք այդ վիճաբանու-
թեան և շարունակէք:— Ալժմ, գիմնազիստ
եղած ժամանակ, այսպէս սկսեց ոլ. Սամու-
էլն իւր պատմութիւնը, կարծեմ սրանից 9
տարի առաջ, ծանօթացայ օրիորդ Սաթենիկ
Պանդխտեանի հետ: Պէտք է խոստովանուել

որ նա ինձ սիրում էր բառիս բուն նշանա-
կութեամբ և այդ ինձ ուղարկած նամակներից
է երեսում, ուր ամենախորին զգացմունքով բա-
ցատրում էր սէրը, նրա առկայծութլը և ա-
պա փոխարէնն էր պահանջում: Ես էլ ի
հարկէ ի վազուց անտի ծանօթ լինելով սիրա-
հար սրտերի մէջ տեղի ունեցած ալեկո-
ծութիւնների հետ, փոխարէնը լայտնեցի, կրկ-
նապատկելով, որով նա իւր ներկայ և ապա-
գալ երջանկութիւնն էր եղբակացնում: Ինչ և
իցէ. անցածն անցել, գնացել է, նա ինձ էր
սիրում, ես նրան: Ախ, ինչպիսի նամակ էր
գրել նա, իմ արտասահման ուղեւորուելու
ժամանակ, ինչպիսի երեակայութիւններ էր
արել... ախ դարձեալ ախ, նա գտնում էր
վշտի, տանջանքի գուները, որոնց մէջ պիտի
մտնէր, իմ ուղեւորութեանս պատճառով ար-
տասահման, որովհետեւ պիտի իրենից բաժա-
նուէի:— Հապա նա չէր ուզում դուք բարձրա-
գոյն կրթութիւն ստանաք. — ինչպէս չէ, ու-
զումէր, բայց սիրոյ անջատումն էր այդ
գլխաւոր շարժառիթը: — «Անհուն և ան-
սահման կարօտ կ'զգամ. կեանք իմ, բացա-
կանչում էր նա նամակում, դու այնտեղ կը-
տանջուես սիրոյ կարօտ զգալով, ես այստեղ.

Բայց շատ հաւանական է որ դու գտնես այնտեղ սրտիդ մի ուրիշ ցանկին, և նրան յախնես և քո ուրախութիւնը և վիշտը և տանջանքը և բերկրանքը, այն ժամանակ ինձ մոռացման կ'տաս: Բայց երբէ՛ք, երբէ՛ք վըկալ է Սստուած, որ քեզանից ես չեմ անջատուիլ հոգեկան տեսակետից, այլ քո անունը ընդ միշտ անմոռաց, անջնջելի կ'մնայ իմ սրտի խորքում: Ո'չ ճակատագիրն իւր խիստ հարուածով, ոչ սրտակաշկանդ ծնողներն իրենց սպառնալիքներով, երբէ՛ք չեն կարող ինձ քեզանից բաժանել: Այն ժամանակ, երբ դու այլ ես ալստեղ չես գտնուիլ, — «ցերեկը մութ է շըջում արեգը, գիշերը թաց աչքիս քունը մօտ չէ գալիս» կ'շջնջամ ես: Բայց ոչինչ, գնա՛ կրթուիր, բայց մի մոռանար ազգութիւն և հայրենիք.

• • • • • • • • • • • • • • • • • • • • •

Ա՛խ, որքան անկեղծ, վեհ զգացմունքներ, սրբազն գաղափարներ էին պարունակվում նրա ինձ ուղարկած նամակների մէջ. նա սիրում էր ազգ, հայրենիք, եկեղեցի և մարդկային այն բոլոր իրադութուած իդեալները, որոնք միմիայն ճշմարտութեան, ազնվութեան. լառաջադիմութեան և հայրենասիրական

տէնդէնցիալի մէջ են խորասուզուած: Ոյմ, նա սիրում էր, ինձ էլ ստիպում էր որ սիրեմ: Ա՛խ, բոլորն էլ սիրաբոբքոք սրտից էին բղխած: Բայց հեռո՛ւ, հեռո՛ւ անցեալի դառն լիշողութիւններ, հեռո՛ւ ինձանից և նա չկարողանալով զալել իրեն, ներքին տանջանքներց բաբախող սրտի մէջ տեղի ունեցած փոթորիկը ստիպեց նրան ծխել և ծխախոտի ծուխը հանելով քթից, գարձաւ ինձ. — պարոն, ես այլ ես չեմ կարող պատմութիւնս շարունակել, խօսելու որժ չկայ. գնանք տուն, իսկ եթէ շարունակութիւնն էլ ցանկանում էք իմանալ, մի ուրիշ անդամ, ես համաձայնուեցալ: Պարոնը դէպի Սոլոլակ գարձաւ, իսկ ես Մուշտակիդի լայն փողոցներով շտապ շտապ քայլերս առաջ դրի դէպի առանձնասենեակո:

Բ.

Երկու շաբաթ անցել էր այն օրից, երբ ես բաժանուեցի պարոն Սամուէլ Նորիկեանից. բայց նա ինձ չ'երևեց: Առանց հրաժեշտ տալու հեռացաւ Թիֆլիսից, թէպէտ և նրա պատմութիւնը ինձ համար հետաքրքրական թուաց: Կիւրակի էր: Ես բոլորովին անձանօժ լինելով Երևանցիների հետ, մտայ սենեակ, ա-

ուալ թուղթն ու գրիչն և Սամուել Նսրիկեանի հասցեին ուղղած մի նամակ դրեցի որպէս զի նա իւր պատմութեան շարունակութիւնը գոնէ նամակներով հաղորդէ։ Երկնքում դիզուել էին ամպերն. անձրել տեղում էր. թուղունները յաճախ մի ծառի միւնքից միսըն էին անցնում ծըլվալով, ապահով տեղ որոնելու համար։ Տեղական ալգիներն ողոզվում էին անձրեւների տակ, փառաբանելով Արարէն, որ իրենց վաղուցուան ծարաւը յագեցրեց։ Ես շատ տխուր էի։ Տխուր էի մանաւանդ այն պատճառով որ, կցկուր լուրեր էին կարկուտի ալէս տեղում ուղարկած նամակներիս պատասխանների մէջ—թէ—Տաճկահաւաստանում այսպէս են անում, այնպէս են անում, տանջվում են, մաշվում են և այլ բազմատեսակ թշուառութիւններ, որոնք բազմատառապ Հայաստանի խորքերում տեղի էին ունենում։ Միւս կողմից՝ սիրատենչ սրտումս դիզուած վշտերը փարատաղի բացակայութիւնը, որի տեսութեան անհուն և անսահման կարօտ էի զգում։ Տեսնում էի ինչպէս եղբայրներս մայր Թուսիալի հովանաւորութեան տակ պատսպարվում են աղատ, աղահով, իսկ տառապեալ արևելքում՝ տանջվում, տոքոր-

վում են, հայրենական գերեզմանների վերջին բեկորներն անգամ գրկելով։ Նամակիս մէջ բացատրեցի իմ օտարոտի գրութիւնն և որի պատասխանն այն պիտի լինէր որ՝ պատմութիւնը շարունակ է։ Հէնց որ ծրարի ճակատին եօթը կոպէկանոց մարկար կացրի և հասցեն գրեցի, իսկոյն ծառախիս կանչելով պատուիրեցի որ շուտով փոստը ձգէ, իսկ այնուհետև անհամբերութեամբ սպասում էի պատասխանին։ Մի շաբաթից յետոյ, ես ստացաւ պարոն Սամուել Նորիկեանից մի նամակ և մի փոքրիկ տեսր, ուր գրուած էր Սաթենիկի կեանքն ու գործերը, աւելացնելով որ միւսն էլ կուղարկէ։

Ա.

ՕՐ. ՍԱԹԵՆԻԿ ՊԱՆԴԻԽԵԱՆ

Օրիորդ Սաթենիկ Պանդիխտեանը բնիկ Թիֆլիսեցի է, ուր ծնուել, սնուել ու դաստիարակուել է։ Նրա հայրը—Ստեփան աղան պարապում էր վաճառականութեամբ, ունէր ահազին հարստութիւն, զանազան դիպուածներում ձեռք բերած։ Սակայն ինչպէս Հայկական առածն է ասում, «քամու բերածը

քամին կ'տանի» և այդպէս էլ եղաւ: Աղքա-
տութեան ծանր հարուածի տակ ընկած նա
տանջուեց, չկարողացաւ երկար ժամանակ
համբերել և երկար մտատանջութիւնից լետոյ
կնքեց մանկանացուն: Նրա մաշուանից յե-
տոյ մնացին՝ կինը և երեք որդին, որոնցից
ամենամեծը Սամենիկն էր, միւսները՝ տղա-
ներ—7, 9 տարեկան, որոնք շուտով մեռան:
Ուրեմն մնաց Սամենիկը իւր մօր հետ: Սա-
մենիկի մասին պիտի պատմեմ ձեզ, որ ամե-
նա կարեսո՞ն է, ցոյց տալու համար նրա կե-
անքը և գործունէութիւնը: Ահա նրա ու-
ղարկած նամակը, որն ինձ ծանօթացրեց օրի-
որդի կեանքի և գործունէութեան հետ:
. Սամուել նորիկեան,

. թէ ինչպիսի տրամադրութեան մէջ
եմ գտնվում ես, այդ կարծեմ աւելորդ է
այստեղ լիշել, այն եսոչ թէ նիւթական կողմերի
սղութեան պատճառով, այլ՝ մի ուրիշ: Ես
չեմ լիշում թէ սրանից քանի տարի առաջ
սովորում էի տեղիս երկդասեան ուսումնա-
րանում, ուր մեծ յառաջադիմութիւն և ըն-
դունակութիւն ցոյց տալով, տրուեցի գիմնա-
զիայ: Այստեղ ես ուսուցիչներն և ուսուցու-
չիներս տեսնելով որ ես բացի դասերից պա-

րապում եմ այլ և այլ գըքերի ընթերցանու-
թեամբ, մեծ ապագայի են սպասում: Այդ
ընթերցանութիւնը մեծ զարկ է տալիս կու-
սական սրտիս: Իինում է որ ժամերով նստած
լուս, մտածում եմ, և յանկարծ աչքերիցս հո-
սում են արցունքի կաթիլները, որոնք յոր-
դահոս առուտակի նման թափվում են դէմքիցս
և ողողում առաջս գրած գիրքն:

Այդ նրանից է որ ես տեսնում եմ հայ կնոջ
թերութիւնները: Անցեալ օրն ուզեցի Գերցի-
գի՝ «կինը Փիզիքական, աղտաբանական, հա-
ճոյական յարաբերութեանց մէջ», սակայն ինձ
արգելեցինք այսպիսի գրքեր կարդալ: Նոյն
պէս և «կանանց հարցերի մասին»: Կանանց
մասին միայն այսքանը գիտեմ որ՝ «կուսական
ոգիները երկնքից իշնող ծաղիկներ են. գոքա-
ձիւնի պէս սպիտակեն և գեղեցիկ որպէս շու-
շանը, բայց կոպիտ ոտքը յաճախ ձգում է դո-
ցա կենսական աղտոտութեան մէջ»: ասում է
Ժան Պաուլը: Նաբաթը երեք անգամ գնում
եմ հայ վարժուհուս մօտ, որը բացատրում,
սովորեցնում է ինձ այն բոլորը, ինչ որ ինձ
համար գեռ ևս անծանօթ է: Նա ինձ ծա-
նօթացնում է կեանքի հետ, մանաւանդ կա-
նացի թուլակազմ իդէալների հետ. բայց չէ

ո՞ր ես էլ եմ կին դառնալու.... Ո՞հա թէ
ինչն է ինձ ստիպում արտասուելու. կեանքը
որպէս տասն երկու գլխանի վիշապ, ինձ իւր
լայնարձակ ժանիքների մէջ ձգած տանջում է
մինչևանդամ պատրաստի մնալով, յաւիտենից
խորխորատը ձգելու, եթէ կանոնաւորապէս
չզարդանամ, ձեռքիս չ'բունեմ այն վսեմ իդէ-
ալական դրօշակը, որի վրայ դրօշմուած է
„émancipation de femme“, *) որի առաջին եր-
դողն եղաւ Փորժ Զանդն, իւր երկասիրու-
թեանց մէջ: Ես տասն և եօթամեայ հասա-
կիցս սկսած պարապում եմ ընթերցանու-
թեամբ, որից տեսնում եմ շատ և շատ փո-
փոխութիւններ են տեղի սւնեցել անցեալի և
ներկալի մէջ, կնոջ իդէալական զարդացման
վերաբերմամբ: Լուսաւորեալ Նւրապան այժմ
իւր բազուկները լայնարձակ բացած, ամուր
բռնել է վերոլիշեալ դրօշակն, ասելով թէ
ինչպէսով կարելի է այդ վսեմ իդէալական կո-
չումն ՚ի կատարածել: (Տեսնում ես, չ'ասես
թէ գիմնազիստկանները բացի դասեր անգիր
անելուց, ուրիշ ոչինչ չը գիտեն, այ, այսպիսի
բաններ էլ եմ սովորել:) Տեսնենք հնապաշտ

*) Կանանց աղտասութիւն:

Ասիան ինչ է անում այդ մասին: Պէտք է ա-
սել որ շատ է ցանկանում ծանօթանալ նա
և մեր լրագրութեանց, Հեղինակների հետ,
անշուշտ որոնցից և կախումն ունէ մարդկացին
իդէալական զարդացումն ու բարդաւաճումը:
ցգրութիւն.... Սաթենիկ Պանդ.

Պարոն, Սաթենիկը մեծամեծ խոստում-
ներ է անում, տեսնենք, ահա քեզ երկրորդ
գործը, նրա օրիորդական ասպարիզում:

Բ.

ԱՅԹԵՆԻԿԻ ԱՐԳԵՍ ԸԶԴԱՑԱՒՔ:

Թէ ինչ նպատակի է ծառալում Սաթենիկի
վսեմ իդէալը, այդ դեռ ևս անյայտ է, այս-
քան միայն կասեմ որ, նա կարդում է (իսկ
թէ որտեղից) արտասահմանում հրատարակու-
ող հայ լեզուով լրագիրներ.

.

.

.

.

Նրա մէջ արմատացել են հայրենասիրական
զգացմունքները, իդէալները և նա ծանօթա-
նում է հետզհետին ազգացին և եկեղեցական Պ
պատմութիւնների հետ: Նա այնտեղից բա-
ւական տեղեկութիւններ ունէ հաւաքած հայ

կեանքից, որոնք իբրև սրբազնագոյն էրեր պահվում են նրա մատանիքի մէջ։ Նա սիրում է ազգ, եղեղեցի, հայրենիք, բայց ոչ այնպէս՝ «Ազգ և հայրենիք, պարծանք և պսակ, կրկնում են նոքա որպէս մի թուժակ»։ Նա սիրում է կարդալանոհասարակ այնպիսի գրքեր, որոնք գլխաւորապէս ազգի ցաւեր, վշտերնեն ամփոփում / մէջ, ինչպէս «Աւոնի վիշտը», անգիր է սովորել — «բայց դուք ով պայծառ և շրնորհալի հինգ երորդ դարի հայոց աղջկեներ, քանի օրհնութիւն խոստովան սրտի, ձեզ անկեղծաբար բերել եմ նույնը...» Նա աշխատում է իւրաքանչեւ այն բոլորը, որոնցով կարող էր մի որև է կերպիւ գործել յօդուտ ազգային բարօրութեան։ Մի օր, երբ առաւօտեան արշալոյսը նոր ողջոյն տուեց կենսատութնութեան ժպիտներին, գնացի Սաթենիկի մօտ, գիտենալով որ նա անշուշտ տանը կ'լինի կայսերական տօնի արձակման առիթով/ և նա տանն էր։ Ես մօտեցալ, ողջունեցի, մայրը տանը չէր։ Նստեցի աթոռի վրալ և նա էլ մօտեցնելով մի աթոռ ինձ, նստեց — Սաթենիկ, գիտեցի Ես նրան, ինչու ձեր գոյնը արդպէս փոխուել, ալլագունուել է, միթէ մի որև է կերպով դուք ճնշվում էք վշտի

ժանիքներից, խնդրեմ յալտնէք։ — Ես երեք թէ չորս օր է վերջացրել եմ Եղիշէ վարդապետի պատմութիւնը, այդ գիրքն ինձ այնպէս գրաւեց, այնպէս կախարդեց, որ երկար ժամերով խնկարկում էի այդ անմահ քերթողի հեռուում հանգչող նշխարներին։ Տեսայ որ մեր ազգի մէջ ևս եղել են դաւաճաններ, անմիաբաններ, և այնպիսիք, որոնք իրենց հայրենիքի ազատութեան և անկախութեան և կրօնը հաստատուն պահպանելու համար արեան վերջին կաթիլն անգամ թափել են, գիմադրելով հակառակորդին... Քանի որ թերթում էի գիրքը, այնքան իմ առաջ ներկայանում էին ալետանջ հայրենիքիս խոցերը, վշտերը, տանջանքները։ Նրա սենեակը գարդարուած չէր Եւրոպական կահկարասիներով։ Կային քանի մի աթոռներ, մի գրասեղան, որի վերալ գարսուած էին բաւականաչափ գրքեր — թէ հայերէն, թէ Ռուսերէն և թէ Փրանսերէն։ Կախուած էին պատից՝ Երջանկալիշատակ Ներսէս Վ Աշտարակեցի, Ստ. Նազարեանի, Միք. Նալբանդեանի և այլ նշանաւոր անձանց պատկերները։ Սաթենիկն ինձ պատմեց՝ լսելով թէ

որտեղից է տեղեկութիւն ստանում Տաճկահայստանի մէջ տեղի ունեցած գէպքերից, թէ Մշուհի մի աղջիկ ինչպէս որ՝ թիֆլիս ընկնելով, տեղական գիմնազիայ մտաւ, ուր մեծ յառաջադիմութիւն ցոլց տալով, ստացաւ աւարտման վկանագիր և քանի մի ամիս մնալով Հայրենիքում, ինձ այնտեղից տեղեկութիւններ է հաջորդում և շուտով պիտի ուղեղուի արտասահման ուր պիտի կատարելագործուէ և ապա այնտեղից գայ Հայրենիք, նրա վշտերը գարմանելու համար: Գունատուելուս պատճառման է որ, գեշերները շատ եմ պարապում:— Բայց ի՞նչով, չի կարելի հարցնել, գիմեցի ես օրիորդին:— Նախ դասերով, ապա ընթերցանութեամբ և ապա մտազբաղութեամբ:— Բայց ի՞նչ էք մտածում:— Դարմանելու պայմանները բանալու միջոցների մասին:— Ե՛հ, թողէք օրիորդ ալդ մտքերը, բան չունէք... Սաթենիկը մի լաւ նայեց երեսիս և ժպտաց: Դրանից յետով մենք բաժանուեցինք:

ՍՈ.ԹԵՆԻԿԻ ԱՐՊԵՍ ԲԱՆԱՍԵԳԾ:

ԵքեղՊառնասի գլխին կանգնած, Սաթենիկը եօթը քորերից ստացել է այն փսեմ

իդէալական կոչումը, որն է «բանաստեղծ» որով նա իւր քնարական մեղմիկ ձայների հնչյուններով կարող է իւր վաղուցուան ցանկութիւններն 'ի կատար ածել, նա ընտրել է երկու թեմա, — Հայրենական և սիրոյ — իդէալներ արծարծելու համար հնապաշա Ասիալի հայ ժողովրդեան սրտում: Նա շարադրում է կամ թարգմանում է գողտըիկ ստանաւորներ, որոնց մէջ պարունակվում են վսեմ գաղափարներ. ես շատ եմ կարդացել նրա գրուածներից և աչա իբրև նմուշ, առաջ բերեմ նրա վերջին գրուած երկու ստանաւոր. մինը՝ «Հայրենիք» միւսը «Սէր»:

* *

Ասացէք ինչ ու ծեր Աւարայրը
Տիրապին սկում, լալիս է ողբում,
Միթէ ճնշում է նրան ծանր բեռը,
Որ այդպէս մեղմիկ արցունք է թափում:

Միթէ... բայց յանկարծ խօսքերիս մէկ մէկ
Գալիս են կարծես պատասխան տալու,
Ազգի ցաւերը նրանն են այդպէս սէգ
Արցունք է թափում վիշտն ամորելու:

* *

Որպէս փոթորիկն ահեղ ովկեանում
Վեր վար է անում, շանթեր արձակում,
Այդպէս իմ մատաղ, վշտալի սրտում
Սիրոյ փոթորիկք յաճախ պատահում:

Այն, սիրում եմ, որպէս իմ սրտում
Բուն է դրել սէրը իւր լայն թներով,
Եւ ես ամեն ժամ եմ երկրպագում
Աֆրօդիտ էին իմ բոլոր ուժով:

Ահա նրա քանաստեղծութիւններից իբրեւ
օրինակ:

ՍԱԹԵՆԻԿԸ ՈՐՊԵՄ ՃԱՐՏԱՍՏՆ.

Մի քանի հայ օրիորդներ թիֆլիսում
ներկալացում տուին. այդ տեղ էր նաև օրի-
որդ Սաթենիկը: Նա շատ վազուց ցանկու-
թիւն ունէր ամբիոն բարձրանալու և այնտե-
ղից իւր սրտում դիզուած զգացմունքները մի
առ մի արտայալտելու հայ ժողովրդեան: Վեր-
ջապէս եկաւ այդ ցանկանալի ժամը և մեր
Սաթենիկը բարձրանալով ամբիոն, փոքր ինչ
կարմրեց և բացեց կարմրագեղ շրթունքները—
Տեարք և տիկնալք, Ալսօր ես ցանկանում եմ
ձեզ մի քանի խօսքով ասել թէ հայ ազգը
անցեալի և ներկայի մէջ ո՞րքան փոփոխու-

թիւն է կրել, երկար տարիների ընթացքում:
Լուսաւորեալ Եւրոպայի շնորհիւ, նրա աջակ-
ցութեամբ: Մենք այժմ ունենք լրագրու-
թիւն, պարբերական հրատարակութիւն թէ
արեւելեան թէ արևմտեան բարբառներով:
Որպէս կամուրջ, Լուսաւորեալ Եւրոպայի գե-
տութիւններից արծարծու ել են Ասիայի խոր-
քերը: Եւրոպայի լոյսը թափանձեց նաև Ա-
սիա: Եւ այսպէս խօսելով, ակնարկեց հինգ
երրորդ դարու գրականութեան բազմաշխատ
մշակներին: Մովսէս Խորենացուն, Ղազար
Փարբեցուն, Եղիշէին, մինչեւ հասաւ Ստե-
փաննոս Նազարեան, նրա գործունէութիւնը
Հայ ասպարիզում, «Հիւսիսափայլ» հրատա-
րակութիւնը: Խաչատուր Աբովեանն և իւր
«Վէրք Հայաստանի» ողբերգութիւնը, Միքա-
յէլ Նալբանդեան եւ իւր «Ազատն Աստուած»
երգը, Գամառ քաթիպայ և իւր «Մայր Արաք-
սի» և այլ և այլ գողտրիկ բանաստեղծու-
թիւնները: Եւ «Հիւսիս» հրատարակութիւնը
«Մեղու Հայաստանի», Աբգար Յովհաննիսեանի
«Փորձ» և Գրիգոր Արծրունու տաղանդաւոր
«Մշակ» լրագրով վերջացրեց իւր ճարտասա-
նութիւնը, աւելացնելով որ՝ հետզիւտէ ա-
ռաջադիմում ենք և ոչ թէ լետազիմում, ինչ-

պէս միւս մեր ընկերակիցները: Թատրոնական սենեակում բուռն ծափաչարութիւններից այնպէս աղմուկ բարձրացաւ որ, եթէ շուտափոյթ լուռթիւնը չէր տիրել, փողոցներից օդնութիւն կ'գալին, կասկածելով մի որևէ, է վըտանդից: Այսպէս, իւր սրտում դիզուած եղէալները միառմի արտափայլեց հայ ժողովրեան առաջ և հեզ, խոնարհ գլուխ տալով իջաւ և նստեց ինձ մօտ. ես շնորհաւորեցի կատարեալ յաջողութիւն ունեցած ճարտասանութեան համար. նա շնորհակալութիւնը յայտնեց ժպտալով: Այդ առաջին անգամը չէ, մի անգամ էլ ուսումնարանի բարեկատակ հիմնադրի մահուան տարեգարձի առնին կարդաց իւր գրած ճառը, ուր բացատրուած էին հիմնադրի կեանքի հայեացքները, որոնք գլխաւորապէս կենդրոնացած էին ազգային իդէալների, նրանց բարւոքման և բարգաւաճն վրայ: Եղբայր, կատարեալ յաջողութիւն ցանկանք ազգանուէր մատաղ օրիորդին:

ՍԱԹԵՆԻԿԸ ՈՐՊԵՍ ԹԱՐԴՄԱՆԻՉ:

Մատաղ օրիորդ Սաթենիկ Պանդխտեանը շատ վաղ է իրեն նուիրում հասարակական

շահերի ձգտումներին: Նա սկսել է պարապել Գէօթէի, Շէքսալիրի, Շիլերի, Կանտի, Հեր—Բերտի, Լամարտինի, Բիռանժէի, Յօրդ Բալրօնի երկասիրութեանց ընթերցանութեամբ: Մի անգամ էլ Սօբրանիալում օրիորդների հետ զբունում էր. ես հեռուում կանգնած էի: Նա ընկերուհիների հետ յանկարծ նստեց նոյն տեղի աթոռներից մէկի վրայ և խնդրեց որ ուշադրութիւն դարձնեն իրեն ժարգմանածի ընթերցանութեան վրայ: Նախ սկսեց Պուշկինից թարգմանած ոտանաւորը կարդալ:

«Ձեզ սիրումէի, շատ է կարելի
Սէրը հոգուս մէջ բնաւին չէ մարել,
Թող չ'վրդովէ նա ձեզ աւելի,
Ես ձեզ ոչնչով չուզեմ վշտացնել:

Ձեզ սիրում էի տնխօս, յուսահատ,
Եւ երկչուութեամբ, նախանձոտ, տանջուած.
Սիրումի այնպէս անկեղծ, մեղմորէն,
Որ ալգապէս ուրշից սիրուես՝ տայ քեզ էն:

Կարդաց նաև մի կտոր թարգմանութիւնից, որ վեցրած էր Ոուսաց ըոմանիստներից: Ընկերուհիները յաջողութիւն ցանկացան, իսկ ինքը յայտնելով իւր խորին շնոր-

Հակալութիւնը, յայտնեց որ աւելի ևս շնորհակալ կլինի այն ժամանակ, երբ փող հաւաքեն հրատարակելու, սակայն մի քանիսը համաձայնուեցան, մի քանիսը՝ ոչ: Ես նրան մօտեցայ: Նա ժպտաց:—Սաթենիկ, ինչ զբաղուելու ժամանակ է, զբօսնեցէք:— «Այժմ ալնքան ինձ հետաքրքրութիւն չի պատճառում զբօսնելը, այլ գրականութեամբ պարապելը: Ես այժմ թարգմանութիւններ եմ անում Ռուսաց յայտնի հեղինակներից:— Սաթենիկ, ինչ ձեր ժամանակն է գրականութեամբ պարապելու, հօ գիտես որ անաշառկրիտիկաները կ'զգգզեն....— Սաթենիկը ժպտաց ըստ սովորականին: Մենք անցանք այն առանձնասենեակը, ուր տանցեվատ էին անում:— Յաջողութիւն եմ ցանկանում, Սաթենիկ, դիմեցի ես.— շնորհակալութիւն, պատասխանեց վսեմաշուք օրիորդը կարմըելով: Հնչում էին երաժշտական փողերը. ոմանք զբօսնում էին, ոմանք նստած խօսում, ոմանք պարում: Ինչ և իցե. գիշերուան ժամի 11 ½-ին միմեանցից բաժանուեցինք: Պարոն, այս, որ ուղարկել եմ ձեզ, տեղեկութիւն հաղորդելու Սաթենիկի կեանքից, վերցրած է իմ աշակերտութեան իշշատակարանից, ամեն անդամ,

քանի որ նրան կամ տեսել եմ, կամ հետը խօսել, իշշատակարանումս նշանակել եմ, որ չ'մոռանամ:

Զ.

ՍԱԹԵՆԻԿԸ ՈՐՓԵՍ ԴԵՐԱՍԱՆ:

Հայ օրիորդները թիֆլսում երկրորդ անգամ ներկայացում տուին, որ մեծ յաջողութիւն ցոլց տուին, իրենց ցանկութիւնը յաջող իրագործելու համար: Այդ տեղ էր և Սաթենիկը: Նա մեծ եռանդով կատարեց իւր գերը. այնպէս էր տրամադրուած իւր ստանձնած դէրի հոգեկան տեսակէտից որ, ամբոխը ապշութեամբ նրան էր նայում և ապուշինման զննում նրա իւրաքանչիւր շարժուածքը և բազմազան դատողութիւններ անում: Դարձեալ ծափահարութիւններ, դարձեալ կեցցեներով պսակուեցաւ: Կեցցէ հայ տաղանդուհի, կրկնենք նաև մենք. Նա դարձեալ հեզ, խոնարհ, գլուխ տուեց ժողովրդին և ընծայ ստացաւ մի թանկագին իր: Այսքանը որ, նա ուրախ է, կարծեմ ամենայն տեղ յաջողութիւն ունենալու համար, թէ ամենայն օր ինձ պատահելու համար: Հանդիսականները

մեծ ուշադրութիւն են գարձնում դրա վրայ,
որ նա մեծ ապագայ է խոստանում: Այս արա-
նով վերջացաւ առաջին տետրակի պատմու-
թիւնը: Նամակ ուղարկեցի որ երկրորդը ևս
ուղարկէ: Երկրորդը ստանալուն պէս անյա-
պաղ կ'ուղարկեմ ձեզ, շարունակելով պատ-
մութիւնս, ապա թէ ոչ եթէ պատմութիւնս
կիսատ մնայ, հոգիս էլ կիսատ կըմնայ:

Գ.

Պարոն Սամուէլ Նորիկեանի պատմու-
թեան ինձ համար հետաքրքրական լինելու
պատճառն այն էր, որ ես թափառական հրէ-
ալի պէս մերժ հաւլաբարի նեղ, մերժ Մուշ-
տայիդի լայնատարած փողոցներում ընակվե-
լով և շրջելով, շատ ու շատ անդամ լսել ու
տեսել էի հայ ժողովրդեան սրտերում արմա-
տացած մոտիսապաշտութեան նախապաշար-
մունքների և մանաւանդ որ այդ պատմու-
թիւնը հենց այդպիսի սիստեմացին էր պատկա-
նում: Ես ցանկանալով այդ պատմութեամբ
աւելի լիազօր գաղափար կազմել ժողովրդեան
հաւատի վրայ, ըմբռնելու նրա էական մա-
սերը, յաճախ նամակներ էի տեղում պարոնին
իւր պատմութեան շարունակութիւնը շուտա-

փոլթ վերջացնելու, որ ինձ գիշեր ու ցերեկ
տանջում էր այն վիշտը, թէ այդպիսի օրի-
որդի վախճանն ինչ է լինելու: Պարոն Սա-
մուէլ Նորեկեանը չ'նայելով որ գործ էր գտել
և ազատ ժամանակ չ'ունէր ցանկութիւնս ՚ի
կատար ածելու համար, սակայն իւրաքանչիւր
ազատ ըոպէն անդամ ապօրինի չ'անցնելու
համար, շարունակում էր իւր նամակագրու-
թիւնը, որոնց մեզ ընդարձակորէն պատմում,
բացասում էր օրիորդ Սաթենիկ Պանդխտեանի
կենաց և գործունէութեան լայնարձակ ձգտում-
ների վսեմութիւնը, շատ անդամ աւելացնե-
լով որ՝ մեր օրիորդների մէջ իւրացուէին
այն բոլոր գիսցիպլինայական իդէալները, ո-
րոնք գործում են յօդուտ ազգային բարօրու-
թեան, բարգաւաճան, մարդասիրական զգաց-
մունքների զեկավարութիւնը ստանձնելով: Եր-
կրորդ տետրակն ևս ստացայ, ուր դարձեալ
ըստ սովորականին երկարօրէն բացատրում
էր և պատմում, սակայն այլ և այլ դիպուած-
ների շնորհիւ, ինչպէս և նախըթացները,
այստեղ լիովին առաջ չեմ բերում, միայն այն-
պիսի տեղերը, որոնք պիտանի կ'լինին: Ահա
երկրորդ տետրի բովանդակութիւնը.

Ե.

.... Սաթենիկ Պանդխտեանը գիմնազիական ուսման ընթացքը վերջացնելուն պէս, անպանոյն տեղ ստացաւ ուսուցչութեան պաշտօն վարելու իրաւունքը: Նա մեծ խնամք էր տանում աշակերտուհիների վրայ: Հարուստներից փող էր հաւաքում և այդ հաւաքած գումարով խեղճերի համար կամ շոր էր գնում կամ ուսումնարանական պիտոյքները հոգում: Նա ուսուցչութեան ծանր պաշտօնը ստանձնելուն պէս, առաջին օրից չդաւաճանեց այն իդէալին, որն ամենախորին զդացմունքով ողջունում է, պաշտապան կանգնելուվ՝ բաղդազուրկ մարդոց պաշտպանողներին: Նա աշխատում էր կարողացածին չափ աշակերտուհիների մէջ մըտցնել ազգասիրութեան զդացմունքները, նրանցից ապագայի համար պատրաստելու լաւ մայրեր, դաստիարակներ, մատաղներնի բարւոքման համար:

Ը.

.... Ինչպէս առաջ ևս ձեզ յայտնեցի, օրիորդը ինձ շատ էր սիրում, 'ի հարկէ եւ էլ նրան: Նա գիմնազիստկայ, ես գիմնազիստ,

ինչ հաւատ կալ կասկած յարուցանելու որ, միմեանց չէինք սիրել: Նա գեղեցիկ էր, ես գեղեցիկ, միմեանց յարմարվում էինք: Ես որ պէտք է ուղևորուէի արտասահման, նրան գեռ ևս պակաս էր երկու տարի, ուսման ընթացքը վերջացնելու: Այստեղ աւելորդ լիցել թէ ինչ նամակագրութիւններ ունէինք, քանի որ ձեզ ևս յայտնի կ'լինի սիրահար սրտերում տեղի ունեցած ալէկոծութիւնները: Հենց որ հասաւ այն օրն, երբ վերջին մնաս բարել պիտի ասէի, նա վզովս ընկաւ. ես երկար ժամանակ չկարողացայ նրանից բաժանուել. նա անդադար համբոյներ էր գրօշմում դէմքիս.— Դուք գնում էք, Սամուէլ, աւազ... վերջապէս մենք բաժանուեցինք միմեանցից: Միւս օրը կայարան հասնելուն պէս, աչքովս ընկաւ Սաթենիկն, որը կանգնած էր հեռուում, անթարթ աչքով չորս կողմը դիտելով: Նա մօտեցաւ ինձ. դարձեալ հրաժեշտ և մի քանի ըսպէից լետոյ, ես անխատացայ նրա գեղաչեալ դէմքի հայեացքներից: Մի քանի վերստ անցայ և առնական սիրտս բեկընկուեց, տատանուելով սիրոյ ահեղ ովկիանի մէջ— կեանքի ալեծուփ մըրիկների գրկում: Առաջ եկան այլ և այլ լիշողութիւններ ան-

Հուն և անսահման տանջելու համար: Աւազ..
սարսափելի դիպուած, արտասուալի արտայալ-
տութիւն— «Սիրու անջատումն»: Յիշում էի
մեր նոր ծանօթութեան ժամանակ տեղի ու-
նեցած սիրալին խօսակցութիւնները, համ-
բուրները, վարդեալ փնջեր ձօնելը, մալի-
սեան գեղեցկավառ գիշերներին զբունելը աս-
տեղազարդ երկնակամարի տակ, հովհար քա-
մու շոյիւնը: Ա. Ի. Ես տանջվում էի.. Ա. Ա.
Ես չկարողացայ ինձ զսպել և արտասուքի
կաթիլները ցայտեցին աչքերից: Ես անմոռնչ
նայում էի ինձ նայող մարդկանց, որոնք ան-
թարթ աչքով նայում էին ինձ, ինչպէս ես
երեխայի նման հեկհեկում էի: Նրանցից ան-
անշուշտ մի քանիսը կարող էին եզրակացնել
իմ արտասուքի պատճառը, գիտենալով և
տեսնելով որ գիմնազիական կըթութիւն ստա-
ցած եմ և հայրենիքիցս անջատվում եմ, ե-
թէ չեմ սիսալում, արդ մարդիկ կարծում են
թէ հայրենիքից անջատուելու համար է...
Արտասահման համնելուն պէս, օրիորդ Սա-
թենիկին նամակ ուղարկեցի, նա ինձ պատաս-
խանեց, լայտնելով իւր ուրախութիւնը, աւե-
լացնելով որ՝ այժմ հաստատ հաւատ եմ ըն-
ծալում այն խօսքերին, որ դուք գրել էիք—

«Զեզ սիրում եմ»: Այդ նրա համար էր որ, ես
յալտնել էի ցանկութիւնս, թէ՝ աւարտելուն
պէս հետը կ'ամուսնամ: Նա իրեն երջա-
նիկ և ուրախ էր զգում, միայն թէ ուխտա-
դրուժ չլինիմ: Անցան երեք թէ չորս ամիս,
բայց ես նամակ չստացայ Սաթենիկից, թէ-
պէտ ես յաճախ ուղարկում էի, բայց նա չէր
պատասխանում: Բազմազան երազներ ինձ տան-
ջում էին, տոչորում. մի՛ գուցէ նա ինձ մո-
ռացաւ, մի՛ գուցէ դաւաճանեց, և հազարա-
ւոր մտքեր սիրաս ու հոգիս կաշկանդած տան-
ջում էին: Նոր էի լիշում թէ որքան դժուար է
սիրոյ բացակայութիւնը, որքան դառը, ցա-
ւալի է անջատման ժամը, բոպէն, վայրկեանը:
Ընդունուել էի գիւղատնտեսական ճեմարա-
նում, շատ օրիորդների հետ էի ծանօթացել,
բայց նրանցից ոչ մէկը չ'էր կարողանում ա-
մոքել իմ վշտերը, որովհետեւ «Աղջիկն էլ
օտար, օտար և լեզուն»:— Որքան ոյժերս թե-
լադրում էին, այնքան ես աշխատում էի ճե-
մարանումն ևս յառաջադիմել: Վերջնական
քննութեան ենթարկուելով, յաջողութիւն ցոյց
տուի և ապա ստանալով վկայաժուղթ, ահա
գործի եմ և հազարներով եմ ռոճիկ ստա-
նում: Հայրենիք վերանառնալիս, ճանապար-

Հին մտածում էի—կ'երթամ , կ'տեսնեմ Սա-
թենիկիս, լաւ գործ կը ճարեմ, երջանիկ և
բաղդաւոր կ'ապրեմ, ապա՞ կ'ամուսնամ հետը:
Հասայ թիֆլիս: Օրիորդից տեղեկութիւն ստա-
ցայ. նրա ինձ նամակ չգրելու պատճառն այն
էր որ, մայրը, ազգականները հեռու մղելով
զանազան խոչընդուներ, արգելառիթներ, ու-
ժով ամուսնացրել են աղայ Մատթէոսեանի
հետ, թէպէտ և օրիորդը սաստիկ ատում էր
նրան, իբրև «Հայ ազգի կատաղի թշնամի»
նա մանաւանդ ինքնառւխտագրժութիւնը: Նա
շատ էլ աղերսեց, խնդրեց, աշխատեց որ
իրեն խնայեն, այդ կոպիտ վաճառականի ձեռ-
քը չգցեն, սակայն սրտակաշկանդ ծնողների
աչքերը կապկապել էին աղայի անբաւ գան-
ձերը: Թէ ի՞նչպիսի ամուսիններ են եղել,
այդ յայտնի բան է որ «անսէր», «կաշկանդու-
ած»: Նախ՝ օրիորդը չէր կարող ամուսնանալ
ալդպիսի մարդու հետ այն պատճառով, որ
նա ոչ մի տեղեկութիւն չունէր լրագրու-
թեան, գրականութեան և լուսաւորութեան
մասին: Նրանն այն էր, որ խալիքին «խարեմ,
ջիբո լցնեմ»: Երկրորդ՝ ինքը բաւականին զար-
գացած էր, գեղեցիկ, վալելչակազմ, իսկ նա՝
կոպիտ, անտաշ, ագեղ: Աչա նրա ամուսնու-

թեան արգելառիթները: Այսպէս ուրեմն, Սա-
թենիկը գերի է գարձել մի անտաշ, կոպիտ
վաճառականի, նրա անբաւ հարստութեան
պատճառաւ և գարձել է տիկին Վաթենիկ Մա-
տթէոսեան:

Ճ.

ԱԻԵՐԱԿ ՏՈՒՆԸ:

Հասայ թիֆլիս: Մի օր հաւաբարի X—
փողոցով անցնելիս, աչքովս ընկաւ մի գեղե-
ցիկ, հոյակապ շինութիւն, որի գաւթի դուռը
բաց էր և ինձ անչափ գրաւեց այն տեղի
ալգին, որ բուրաւէտ ծաղիկներով, գեղեց-
կատեսիլ շատրուաններով, որի ջրի կաթինե-
րը «ցալտում էին վառ շիթեր»: Յանկարծ աչ-
քովս ընկաւ պատշգամբում կանգնած մի նի-
շար կին, որ անչափ հետաքրքրութեամբ
նալում էր ինձ, չգիտեմ հագած «Փորմալիս»
համար, թէ զգում էր ծանօթ ոմն: Մէկ էլ
նայեցի և այդ կնոջը տեսայ դրան շեմքին
և «Սամուէլ ջան» տաելով, ընկաւ զգովս և
երկար համբոյրներ կնքելով դէմքիս, ասաց.
«Սամուէլ, դու չես ճտնաչում ինձ.— ախ
Վաթենիկ... ալստեղ չկարողացանք մենք մեզ

զսպել և ուրախութեան արցունքները ցոլացին, երկուսիս աչքերում։ Ներս մտանք դահլիճ, երկար ժամանակ խօսում էինք այն մասն, թէ ինչպէս ամուսնացրին Սաթենիկին այդ վաճառականի հետ, յաղթելով բազմաթիւ խոչընդուների։ Երկար խօսակցութիւնից յետոյ բաժանուեցի, ուխտելով, ամեն անգամ կտեսնուեմ։ Սկսած այդ օրից, մենք ընդ միշտ տեսնվում էինք, բայց ոչ մի անգամ մեզ աղան չ'նկատեց և եթէ նկատել էր, այն ժամանակ վայն եկել էր մեզ տարել, «մի մատը մեղը կըդանալինք»։ Մի օր վերջապէս նկատուեցինք։ Թէ ինչ հետևանք ունեցաւ մեր գաղտագողի տեսակցութիւնը, յախնի բան է որ՝ վատ։ Սկսած այդ օրից աղայ Մատթէոսեանը սկսում է թշուառ աղջկան արհամարհել, հայհովել, գլխին սպառնալիքներ թափել, սակայն նա համբերում էր, տանելով կեանքի ծանր հարուածը։ Բայց մի կողմից իրեն հրցանիկ էր զգում, որ ինձ տեսնում էր, և տխուր էր զգում, որովհետեւ այն, ինչ որ ինքն էր ցանկանում անել ինձ, ընդ միշտ անլաջող ելք էր ունենում — այն է երկար տարիների ընթացքում պարգևած սիրոյ փոխարենը... Մի շաբաթ ես ալ ևս

չկարողացայ նրա մօտ յաճախել, այդ պատճառով նա ամեն գիշեր ինձ երազում երեսում էր էր, յալտնելով իւր վիշտը, ցաւը, տիրութիւնը, ինձ չ'տեսնելու պատճառով։ Մի քանի օրից յետոյ ես լսեցի որ, նրան պատահել է այն հիւանդութիւնը, որ ձեզ պատմեցի տռաջ։ Այն է՝ գիշերները վեր է կենում անկողնից և ձեռքն ընկածը ձգում աղալի վերալ։ Ահա այս է դրա հիւանդութեան սկզբնապատճառը։

Մի քանի ժամանակից յետոյ նամակ ստացայ, որի մէջ յալտնում էր թէ Սաթենիկն արդէն կնքել է իւր երկրաւորը։ Աղայ Մատթէոսեանն էլ գինարբեցութեամբ, թղթախաղութեամբ և զանազան ալլակերպ տեղեր յաճախելով, պարապելով, ձեռքն ընկածը վատնել, փչացրել, ալժմ որպէս շուն, նա ընկած է տների, խանութների դռների շեմքերում և ոչ մի կողմից օգնութիւն չէ ստանում։ Նրա կառուցած գեղեցիկ շինութիւնն, ուր բնակվում էր ինքը, այժմ քանդուած, փլած է, երկար անմարդաբնակ լինելուց, որովհետեւ, ով որ լսում է թէ այդ տեղ բնակուելիս են եղել Սաթենիկն ու աղայ Մատթէոսեանը, իսկոյն փախչում են, ա-

սելով որ՝ այդ տեղ բնակվում է մի Զար
Հրեշտակ, որը ցանկանալով միախակ անցնել
իւր օրերը, լայն թեւերով խփում է նրանց,
որոնք կըհամարձակուին մօտենալով իւր բնա-
կավայրին՝ հանգստութիւնը կորցել: Իսկ ուժ
որ նրա թեւը դիպչի, իսկոյն կամ ալիսի խե-
լագարուէ, կամ լուսնոտութիւն պատահէ,
կամ մեռնի:

Ա Ե Բ Զ:



8349

ԳՐԱՆ Է ԾԱՌ.

Վաճառվումէ „Կավказская книжная Торговля“
Գրախանութում:

2013

